

դէպք մը Իզմիրի մէջ :
Յոյները կարծես մեզմէ շատ աւելի լաւ գիտցան գնահատել այս կարգի հերոսական գործերը, որոնք մասնաւոր բաւականութեամբ ընդունելով յաջողութիւն կը մաղթեն շարունակութեան համար այդ սրբազան սպանութիւնները :

Մաքսուտին վիրաւոր մարմինը կը փոխադրուի յունաց հիւանդանոցը : Գարաթաշի քահանան եւ իր մասնիչ վիժակը կառք նստած կը փութան վիրաւոր տեսնելու :

Հիւանդանոցին բժիշկներէն մին որ խնդրոյն իրազեկ եղած կը լինի ու միայնագամայն կը հստակայ Գարաթաշի այդ քահանային ու իր աղուն ալ մասնակցութիւնը այդ կարգի վատ արարքներու մէջ, կակսի երկար պարտաւել ու իր քահանայութեան պաշտօնին կողմէն իր կենսալու համար այդ կարգի ամենագարշելի ու կործանարար ընթացքը յիշեցնելով : որ յեղափոխականները երբէք յանցանք չունին իրենց այս ընթացքին մէջ քանի որ աշխարհ ընդունած է մասնիչին իբր պատիժ մահ գործադրելը :

Վաճառական յոյն մը լսելով Մաքսուտի սպանման պարագան՝ կը յայտնէ թէ Գարաթաշիին սպաննուելու լուրը իրեն առաջին հաղորդողին մէկ ոսկի պիտի նուիրէ ... Կրնաք այ եւս գաղափար կազմել թէ որպիսի համակրանք կընդունուի այս կարգի գործողութիւնները օտար սարբերէն : Կառավարութիւնը խոստացաւ 100 ոսկի նուիրել հիւանդանոցին եթէ կարենան բժշկել Մաքսուտը, միւս կողմէ մեծկակ նուէր մը եւ 15 ոսկի

աճականով պաշտօն խոստացաւ մարդասպանը բնազդին, սակայն ի գուր իր գործը դրած խոտութիւններ երեւան բերին որ թօփախաններու վաճառատունը աշխատող երիտասարդ մը այդ միջոցներուն բացակայ գրտնուած է եւ ան կը յարմարի նկարագրուածին : Ու չի կրնալով այդ երիտասարդը գտնել, Գարաթաշի իր հետ ուսականներ առած կերթայ յիշեալ երիտասարդին եղբայրը կը ձերբակալէ որը քանի մը օր բանա միակ վերջ իր մայրը անգլիական հիւպատոսին դիմելով հիւպատոսին միջոցաւ կարծակուի : Ինչպէս կերեւի հիւպատոսական շրջանակներուն մէջ ալ մասնաւոր տրամադրութիւններ կան, որովհետեւ անգլիական հիւպատոսին դիմումը կերեւի բանտարկեալին արձակելու համար, կառավարութեան կողմէ նախ ընդգիծութեան կը բաղխի, բայց հիւպատոսը անողոքարար կը պահանջէ բացականչելով թէ ձեռնադրանքն մարդ առած եմ ասիկայ որ յանցանք մը չունի բանա պիտի թողո՞ւմ ...

Վերջին պահուն կիմանանք, որ Մաքսուտը 16 օր ստակալի կերպով շարժարուելէ վերջ վերջապէս իր վերջին շունչը փչած է :

Յուզարկաւորութիւնը կատարուած է քահանայով, ժամկոչով եւ իր մէկ ազգական ու Գարաթաշի, ուրեմն 4 հոգիով տարած յանձնած են զայն դժոխքին գիրկը : Հասարակութիւնը այսպիսով փայլուն ապացոյցը տուաւ

իր համակրութեան դէպի յեղափոխութիւնը :

Կառավարութիւնը այժմ Պոլսէն նոր լրտեսներ բերել տուած է որոնք շատ ճարպիկ են եղիւր : Հաստատադրութիւններ կիմանանք որ քաղաքի մէջ այժմ կին լրտեսներ եւս կարողուած են : Այս հաշուով բաւական գործ բացուել է մեր առաջ, տեսնենք ո՞վ կը ձաճարնայ, մենք սպանելով, թէ կառավարութիւնը իր ինչքորներու բանակներով :

Մինչև ցարդ կառավարութեան միւլարութիւնը այն էր, որ յեղափոխական կարծուածները զրոյն եկողներ էին, այժմ որ հաստատեց թէ տեղացիներէն ալ յեղափոխական կրնայ ելլել, կարծես երկու սուրբ մէջ միաց : Ինչպէս ընէ, որ քաղաքը առանց յազումի ենթարկելու դէպքերու առաջը առնէ :

Մեր հարուստներն ալ նոյն կացութեան մէջ են : Աստուք համար երբ խնդիրը դրսեցիտ հետ է, կարծես թէ այդ դրսեցիտ իտրթ տարր մը լինի, ամեն ճիգ կը թափէ զայն խեղդամահ ընելու համար, բայց որ անգամ մը համոզուի թէ յեղափոխական գաղափարը միայն դրսեցիտ յատուկ չէ եւ որ Իզմիրն ալ կրնայ իր մէջ պարտել զայն, այն օրէն լիբերայի հարուստին կենսալ յեղափոխականին ճանկերուն մէջն է : Երբտեսարութիւնը այժմ հաստատ հաւատքով որոշած է գործել արհամարելով ամեն տեսակ խոչնդոտներ որ ամեն կարգի մարդիկ իրենց յատուկ բանակներով կը հանեն իր առաջ : Կառավարութեան խոտութիւն

ները աւելի ու աւելի պիտի կարծազնէ, պիտի կռէ մեր սրտերը մեծ ապագային համար : Հայ հարուստին քարսրտութիւնը պիտի պոթկացնէ մեր զայրոյթը, տնօրինելու համար յատուկ պատիժներ այդպիսեաց, սքեմաւոր ու սքեմով վատերու համար : Մենք վճիռ չէ որ կարծակինք կամ պիտի արձակենք, մեզմէ շատ դարեր առաջ աշխարհը իր վճիռը արձակած է մասնիչ վատերուն համար : Դաշոյն ու ատրճանակ կտակելով, Ու մենք կը քաշինք այդ շաւղով աւանդութեան հաւատարիմ միւլով :

88

Պոլսկազ 28 յուլիս 1902

Տէ՛ր Խմբագիր,

Ամսոյս 24 թուակիր ձեր թերթին մէջ անձիս նկատմամբ անտեղի և յարձակողական մի գրութիւն կարգացի, որուն մէջ կըսէ, «նկեղեցւոյ բեմէն քանի մը անձինք անուանարկած եմ եւ, տեղւոյս համայն ժողովուրդն վկայ է թէ՛ սոյսպիսի բան մը երբէք չէ՛ եղած իրողութիւնն հետեւեալն է :

Տարւոյս մայիս ամսոյն սկիզբները զուգարկալութեամբ տեղս այցելեցի : Տէր Գարեգին քահանային ծանօթ խնդրոյն առ

Բ Ա Ն Վ Ս Ի Ր Ա Վ Ա Ն

Վ Ե Ր Ա Ծ Ի Ն

Մ Ա Ս Ա. 16
Գ Լ Ո Ւ Ն Ե.

Մի շաբաթից աւելի էր որ Հեղինէն վերադարձել էր իրենց տունը, իսկ Դաղիկեանը իր դպրոցը, Երկու սերահարներ երջանիկ էին, գրեթէ ամեն օր հանդիպում էին իրարու, փողոցում, ու եւ է ծանօթի տանը : Բայց երկար խօսելու միջոց դեռ չէին ունեցել :

Դաղիկեանի դէմքում թագաւորող խոթոտութիւնը անհետացել էր. նրա աչքերը միշտ ուրախ ու գոհութեան փայլ ունէին, իսկ Հեղինէն բոլորովին փոխվել էր, նա կատարեալ սովորակ էր դարձել, շարունակ երգում էր, թէ ազատ եւ թէ գործի վրայ եղած միջոցին :

Մի օր Դաղիկեանը դպրոցից առնելով փերադանալով իր սեղանի վրա մի նամակ գտաւ. նամակը իր ամենասիրելի ընկերոջից լինելով նա իսկոյն բացեց եւ սկսեց կարդալ :

—Սիրելի Դաղիկեան, այսօր մեր ն. ձերբակալեց. այդ կողմերում էլ խուզարկութիւններ կը լինեն. ըզգուշացիր եւ զգուշացրու ում հարկն է. քրովհետեւ հասցէներ են բռնվել :

—Այ քեզ օյին. չնչաց Դաղիկեանը. այս սեղ էլ պիտի իրար խոտնով... իմ հասցէն չը կայ այդ հասցէներին մէջ. բայց ծայրը ինձ էլ կը հասնի :

Ու առանց ժամանակ կորցնելու, Դաղիկեանը սկսեց իր թղթերը աչքի անցնել : Վտանգաւոր թղթեր չը գտնելով շտապեց գնալ զգուշացնելու

ուս պէտք էր, իր բնակարանից մի քանի քայլ հասնել էր անցել երբ ներս առաջ դուրս եկաւ Հեղինէն :

—Ուր, պարոն Դաղիկեան, ես ձեզ մօտ էի գալիս :

—Սարգսի մօտ եմ գնում. Հեղինէն շտապ գործ ունեւ :

Բայց ես էլ գործով եմ եկել քեզ մօտ :

—Ինչ գործ կայ, Հեղինէ, որ այդպէս կտապեցրել է քեզ :

—Ետտ կարեւոր գործ. այսօր ուստիկանապետը եղբորս յայտնել է որ դու կասկածելի մարդ ես. ինքը պաշտօնական տեղեկութիւն է ստացել այդ մասին. եւ կարելի է որ քեզ խուզարկեն :

—Ես էլ գիտեմ, Հեղինէ. թող խուզարկեն. ինձ մօտ ոչինչ չը կայ վտանգաւոր :

—Բայց դու ինչպէս իմացար Դաղիկեան :

—Ինձ էլ պաշտօնապէս տեղեկութիւն տւին. բայց ի հարկէ ոչ ոստիկանապետը. էն դրա մասին մտածել չարժի. ւովորական բաներ են. զընանք. պէտք է ես էլ զգուշացնեմ ուրիշներին :

—Բայց եթէ քեզ ձերբակալեն. դու մի անգամ էլ բանտարկվել ես. քեզ հետեւ տեղեր են քշել. այդ ամենը ոստիկանապետը եղբորս յայտնել է. եթէ հիմա էլ ձերբակալեն եւ աքսորեն :

—Կարող է պատահել : Բայց յոյս ունեւ որ չեն ձերբակալի, որովհետեւ իմ մօտ ոչինչ չեն կարող գտնել. եւ ոչ մի կայ կասկածելի մարդկանց հետ : Բայց եթէ ձերբակալեն դու ինչ կանես Հեղինէ :

—Ես էլ քեզ հետ կը գամ. ուր որ աքսորեն քեզ. ես էլ այնտեղ եմ :

—Բայց ձեռքդ չեն թողի :

—Դնողներն պահանջին չեմ ենթարկվի, Դեհ, դու գնա ում որ տեսնելու ես տես. այս երեկոյ մեզ մօտ եկ :

Ես էլ այստեղից գնում եմ հօրս. քրոջս առնել. եթէ չուս վերադառնաս, արի նրանց մօտ, միտին դուրս կը գանք. ինձ կուղեկցես մինչև մեր տունը : Լաւ կը լինի, չէ՞ :

—Ետտ լաւ կը լինի, պատասխանեց Դաղիկեանը. եւ սեղմելով Հեղինէի ձեռքը բաժանվեց նրանից :

Ճանապարհին Դաղիկեանը ընկաւ մտմտութի մէջ :

—Բայց իսկապէս եթէ ինձ այստեղից արտաքսեն, ինչ կը լինի Հեղինէի վիճակը. գիտի որ ես իրաւունք չունեմ սիրային խնդիրներով մէջ մտնելու. սիրելու, ինձ նման մի մարդին, որը միշտ, ամեն մի բոպէս խաղալիք է անակակալների ճիրաններում աւելի լաւ է հետեւ մնալ այդ տեսակ կայանքներին, կը գայ. Ե՞րբ նողներին չի ենթարկվի :

Բայց ո՞ր կը գաս խեղճ Հեղինէ. ինչի վրա յիշված կը գաս. միթէ սէքս միայն կը բաւէ քեզ երջանիկ դարձնելու համար. պէտք է ապրես որ զգաս սիրոյ քաղցրութիւնը. իսկ ինձ նման մի հալածական, անկայուն մարդը քեզ կեանք կարող է տալ :

Սէրը քաղցր. կենսատու զգացումն է. բայց նա տանջող զգացումն է զժրատութեան պարագաներում : Սիրելը եւ միտին տանջվելը միայն բանաստեղծները կարող են գովարանել : Չէ, ես սրալվեցի պէտք չէր պատասխանել Հեղինէին. պէտք էր միշտ անտարբեր մնալ : պէտք էր որ ես խեղդելի լիմ զգացումները ... իմ անտարբերութիւնը չէր զինելին էլ կատարել անտարբեր մնալ, ժամանակի ընթացքում նա կը մոռանար ինձ. եւ աւելի զիրու թեամբ :

որովհետեւ անտարբերութիւնը նուազանչ տալու ամենադաւան միջոցն է : Մի կողմից լաւ որ դեռ պաշտօնական գոյն չէ ստացել մեր սէրը, եթէ մի փորձանք էլ պատահի ինձ. Հեղինէի վրա խօսք չի գալիս թէ եւ նրա համար ասէկօսէները կարեւորութիւն չունեն. բայց եւ այնպէս առանց ասէկօսելի աւելի հանգիստ է :

Դաղիկեանի մտքի թելը դեռ չէ կտրված, յանկարծ նրա ետեւից հասաւ մի ոստիկան սպա. եւ քաղաքավարութեամբ յայտարարեց :

—Ներեցէք Պ. Դաղիկեան. մենք քեզ էինք փնտնում. ոստիկանապետը ձեր բնակարանումն է, հանցեցք գնանք :

—Մի երկու վայրկեան ինձ ժամանակ չէք կարող տալ, հիմա գալիս եմ, դուք ինձ սպասեցէք բնակարանումս. եթէ ու եւ պատժուենք կատարելիք, ահա եւ իմ արիւնքներս բանալիները :

—Ոչ, միտին պէտք է գնանք. բայց եթէ ուզում էք, ես միւս կողմը կանցնեմ, դուք ձեր գործը քննարկեք եւ այն փողոցով եկէք. քաղցր ծայրում իրար կը հանդիպենք :

Ոստիկանը հեռացաւ, իսկ Դաղիկեանը շտապով հանդիպեց Սարգսին : պատերեց զուշուրիւններ ձեռք առնել վտանգաւոր թղթերից ազատ լինելու համար եւ ինքը արագութեամբ հասաւ ոստիկանին ու նրա հետ միասին մտաւ իր բնակարանը ուր տեղաւորվել էին իրենց տան պէս ոստիկանապետը, ժամատարմանի կապի նանը :

(Շարունակելի)

—

Թիւ. Եկեղեցին առանց քահանայի մնացած ըլլալուն, թէ արդի թաղ-խորհրդի անդամոց և թէ ժողովրդեան ոմանց խնդրանաց համեմատ, համակերպեցայ առժամայէս 3.4 ամսուան համար 50 ֆրանք ամսականաւ, և ընտանեացքը նախկին համար, վարժարանի համար, գնուած տան մէջ երկու սենեակ յատկացուցին, մինչեւ յառաջիկայ օգոստոս ամսոյն վերջերը բնակելու համար, և որոշեցին ճանապարհածախս առով ընտանիքս փոխադրել աստ:

Արդ, այսպէս սկսեցի պաշտօնավարութեան, արդէն ծանօթ է տեղոյս ազգային անկերպարան և անմիաբան վիճակն:

Ուստի, սկսեցի ամեն կիրակի բեմէն սէր և միութեան, համերաշխութեան և եղբայրսիրութեան յորդորներ կարգաւ, և անսնելով թէ տեղոյս ժողովրդեան մեծամասնութիւնը եկեղեցի չեն յաճախէր, հետաժուտ եղայ պատճառներն իմանալ, տեսայ թէ՛ տեղոյս Ազգ. գործերուն խառնաշփոթութեան և արդի թաղական խորհրդոյ կազմալուծեալ վիճակին վրայ դիտողութիւններ կընեն, ժողովրդեան մեծամասնութեան սոյն իրաւացի դիտողութիւնքն նկատողութեան առնելով, փափագեցայ վերջ տալ սոյն խնդրոյն, և կարելի եղածին շափ գարման մը գտնալ ժողովրդեան սոյն իրաւացի դիտողութեան համար:

Ուստի, արդի կազմալուծեալ թաղականք, նշմարելով իմ միտումներ սկսեցին հայածել զիս, և յախուռն ընթացքներով յաշտ ժողովրդեան առաւել եւս ատելի դարձան վասն զի, բունի թաղականութիւն ընել կուզեն միշտ:

Ուստի, պ. յօգուածագիր, գուզայ ամեն գիտնալով, ի՞նչպէս և ո՞ր յանցանքիս համար կը յանդգնիս զրպարտել:

Մնամ աղօթարար

Գեորգ Քանանայ Հիւրմիտեան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Կիպրոսէն՝ երկկ գործակալութեան հասած հեռագիր մը կըսէ թէ, Հայաստանի վիճակը անասանելի է, խուճը խուճը քիւրտեր ամեն կողմ կը թալանեն և կը կոտորեն: Սըղբերդի կառավարիչը (մէք) ուզելով մօտակայ քաղաքը երթալ օգնութիւն խնդրելու, ճանապարհին սպանուած է: Քիւրտ պետերը Ղանօղլու (?) գիւղը թալանի առով, կիները իրենց վայրագութեան զոհ դարձուցին, որոց շատերը մեռան քիւրտերու վայրենութենէն:

ՀԱՅ ՊՈՏՏՐԻ ԲՔՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ (մասնաւոր ճամբով՝ յէտք Ուէսգա՛ի լրատուներէն) — Հայերը Կ. Պոլսոյ մէջ երկու պատրիարքներ ունին — կրօնապետներու թիւը կարող է երեքի բարձրացնել թրքահայոց մէջ երկէ հաշուենք բողոքական հասարակութեան պետն ալ — մին՝ Լուսաւորչականներուն համար որ գրեթէ թուրքիոյ բոլոր թեմերուն վրայ գերիշխանութիւն ունի իբր կրօնապետ և միւսը՝ կաթողիկ հայերու համար, որ կը կարծուի թէ 100—150 հազար՝ այդ գաւառնութեան պատկանող հայերու վրայ կիշխէ:

Գալով բողոքականներու պետին, որոշ չի գիտցուիր թէ քանի՞ ծուխ ունի, ոմանք կը կարծեն 45,000, ուրիշներ այդ թիւը չափազանցուած կը գտնեն, իսկ կարգ մը անձինք՝ որոնք ընդհանրապէս լաւ տեղեակ են՝ կը հաւատան թէ, բողոքականներու թիւը վերջին տարիներուս մէջ (կոտորածներու ժամանակ և յետոյ) չափազանց շատցաւ, շնորհիւ բողոքական ազգերու Գերմանիոյ, Անգլիոյ, Ամերիկայի, Չեխոսլովակիոյ հայկական նահանգներու մէջ բացած որբանոցներու, նախակրթարաններու, գարոցներու և ուրիշ կրթական և արհեստի վերաբերող հաստատութիւններուն: Բայց բողոքականներու խնդիրը մի կողմ թողունք և անցնինք պատրիարքներուն, Երկու ամիս է ինչ երկու հայ պատրիարքները հրաժարականի խնդիր մը ունին, որուն վրայ ամեն օր կը խօսին, մանաւանդ Գրիգորեաններու (Լուսաւորչական) պատրիարքին հրաժարականը կատարեալ կատակերգութեան մը գոյն առաւ: Օր մը լուր կը տարածուի թէ պատրիարքը հրաժարեր է՝ մէկ ժամ յետոյ կը հերքուի այդ լուրը, ուրիշ անգամ մը պատրիարքը իւր պալատէն դուրս չելլելուն՝ հիւանդութեան կամ ուրիշ պատճառի մը համար, լուր կը տարածուի թէ պատրիարքը ա՛լ հրաժարեր է և չուզեր հայերու գործերով զբաղիլ . . . վերջապէս՝ հրաժարելու և չի հրաժարելու լուրը այնքան յաճախ կրկնուեցաւ որ Կ. Պոլսոյ պաշտօնական շրջանները և հայ ազգաբնակչութիւնը այն ժամանակ պիտի հաւատան հայ պատրիարքին հրաժարականին երբ իրօք անոր տեղը ուրիշ մը տեսնեն!:

Գալով կաթողիկ հայերու պատրիարք Էմմանուէլին, սա քարի նման պինդ մարդ մը կերելի: Այս ալ հրաժարականի խնդիր մը ունի, որուն ինքը կարեւորութիւն իսկ չի տար: Կարգ մը հայ կաթողիկ եպիսկոպոսներ՝ զժգոհ

Էմմանուէլի վարչութենէն, բողոքագիրներ զրկած են եղեր Հոովմայ Ս. Պապին և խնդրած են պաշտօնանկ ընել Էմմանուէլ պատրիարքը:

Պապը կը հրամայէ պատրիարքին հրաժարականը աւալ. . . բայց պատրիարքը պապին խօսքը յարգելով հանգերձ կը պատասխանէ թէ ինք պատրիարք ընտրուած է և պատրիարք ալ պիտի մեռնի, հրաժարական մրաժարական չի հասկնար. . . Ոմանք կըսեն նոյն իսկ թէ պատրիարքը աւելի խիստ լեզու մը զործած է և ի միջի այլոց ըսած է՝ զիբը Աստուած, վարը Սուլթանը կը ճանչնամ (?) և ո՛չ ոքի իրաւունք կը ճանչնամ իմ պատրիարքական գահէս վար իջեցնելու. . . (?) — Ուրեմն կաթողիկ պատրիարքին հրաժարականի խնդիրը միանգամ ընդ միշտ վերջացած է, մարդը չուզեր հրաժարել. վէստէլամ:

Մե. ի. Ս. Դուրի Բեկ

ԴԵՍԻՑ ԴԵՆԻՑ

Անգլիայի թագաւորի թագաւորութեան հանդէսը տեղի ունեցաւ. այն ահագին վախը որով ահաբեկուած էր ամբողջ անգլիական ժողովուրդը թագաւորի հիւանդութեան պատճառով անցաւ և էտուարտ Է. բորդը առաւելական տակոնութեամբ դիմացաւ այն հանդէսին որո շնորհիւ իր զլխուն պիտի դուռէր անգլիական թագաւորներու ծանր թագը: Անգլիական ժողովրդի ծանր խոհերէն մին ալ լինցաւ, և եթէ էտուարտ կարենայ քանի մը տարի ևս ապրիլ, Անգլիան պիտի մանի իր յառաջագիժութեան բնական ընթացքին մէջ:

Յրանսայի մէջ իրարանցում մը կը տիրէ. կղերականներուն դպրոցներու գոցումը տեղի կուտայ այդ իրարանցումներուն. բայց դպրոցները կը գոցուին: Կղերականները արդէն սկսած են զանազան պետութեանց գիմել, որպէսզի զիրենք հիւրնկալեն իրենց երկիրներուն մէջ:

Յրանսայէն հալածուած ճիզուրիները և մայրապետները պիտի տարածուին Փոքր Ասիոյ և ուրիշ փոքրիկ պետութիւններու մէջ:

Ատոնցմէ մեծ խուճը մը արդէն կը պատրաստուի Հայաստան մեկնել: Այդ, իրենց երկրէն իբր վնասակար տարր հայածուածները պիտի երթան փոքրիկ ժողովուրդներու մէջ տեղաւորուելու ցեցեցու նման՝ լուսաւորութիւնը

տարածելու դիմակին տակ. ու այնտեղ պիտի վայելեն զիրենք հայածող հարազատ կառավարութեան ջերմ ու հզօր պաշտպանութիւնը: Լրբացած Երոպան իր ալտոտ տարրերը մեր արիւնով կը սնուցանէ:

Ռուսիոյ մէջ խլրտումները դեռ դադարած չեն. ազատ հրատարակութիւնները շարունակաբար և գաղտնի կերպով կը տարածուին երկրին ամեն կողմերը. Թոլսթոյ կրկին կառավարութեան դիմած է որ իրեն հետեւողները չը հալածեն, այլ զինքը հալածեն, որովհետեւ ինքն է կարծուած չարիքին բուն պատճառը:

Ձիւնաստանի մէջ պօքսէրները կրկին երեսան եկած են. ու կը շարունակեն իրենց գործունէութիւնը: Ձիւնական կառավարութիւնը ճիզեր կը թափէ պօքսէրները ճնշելու համար. բայց առ այժմ փայլուն յաջողութիւն մը չի երեւիր: Եթէ այսպէս շարունակուի, կարելի է որ Եւրոպան կրկին ստիպուած ըլլայ Ձիւնականներին գործերուն միջամտել:

ԴԺԳՈՂԸ

Գանի մը օր սռալ մեր հանրածանօթ զժգոհը իր հայրենակիցներէն մէկէն երկու փառաւոր ապտակ կերաւ. գիւցազնական աչքերը կայծակ տուին: Հերոս ըլլալէն ի վեր այդպիսի դժբախտութեան մը հանդիպած չէր: Փաշաները անգամ յանդգնած չէին անոր կծու խօսք մը ըսել և պարզ հայ մը մոռնալով որ իր առջեւը մենծ հերոս մը կանգնած է քաշեց իր խոշոր ձեռքերը ու ապտակները փակցուց: Դժգոհը այլ եւս չը կրցաւ քաղաքին մէջ մնալ ու փախաւ ամարանոց, գեղեցիկ բնութեան մէջ, ծովային ոգիներու մեղեգիներու ձայնին տակ ցաւը մոռնալու . . .

Դժգոհը կը մոռնար. բայց յանկարծ, միտքն ինկաւ, որ իրեն համար անպատուաբեր էր այդ ապտակները մարսել. շտապով վաղեց քաղաք, իր բարեկամ խմբագրին գանգ տելու, բայց խմբագրատուն մտաւ չը մտաւ. իրեն ներկայացաւ տխուր տեսարան մը. կապիկի պէս երիտասարդ մը ուսը բռնեց էր և կը պոռար. ինքը խմբագրուպետը կը ցատկուտէր. ձեռքերը մէկ

վզին, մէկ մէջքին մէկ գլխուն կը տանէր ու պուտուղ կը հայհոյէր :

Դժգոհը շուրթեցաւ մնաց, և վայրկեան մը այդպէս կանգնելէ վերջը ըսաւ :

— Ի՞նչ կընէք եղբայրներ, ի՞նչու կը պուտաք, ինչերնից կը ցաւի՞ :

— Օհ, մի հարցներ, միաբերան պատասխանեցին խմբագիր և աշխատակից. ծեծեցին զմեզ եղբայր, անգթօրէն, շան մը պէս :

— Ո՞վ ծեծեց, ո՞վ :
— Դաշնակցականները. բարձրագոյն հրամանով, դաւադրութեամբ :

— Բայց զիս ալ պատկեցին, երկու խոշոր ապտակ ալ ես կերայ, բայց ոչ Դաշնակցականէ, ապերախտ հայրենակցէ մը :

Աւատ խօսքին վրայ երեքն ալ սկսան պուտալ, լալ և սկռաներ կը ծտեցնեն :

— Բայց լալով բան չի գտնար, եղբայրներ, ամօթ է աս ծեծը մարտել. դուն ալ մեզի հետ միացիր, պրն. Դժգոհ, և եկուր ահագին տեղեկագիր մը պատրաստենք, ամեն դաշնակցականներու մասին, և կառավարութեան տանք :

— Ո՞չ, պատասխանեց դժգոհը. ես մատնիչ մը չեմ կրնար գտնալ. ծեծողները յայտնի են. չեն ուրանար որ զմեզ ծեծեցին. գործողութիւնը կատարուած է արեւու տակ, օրը ցերեկին, ամեն դաշնակցականներու մասին ինչու՞ զրպարտագիր տանք :

— Բայց անոնք մեր թշնամիներն են, միջամտեց խմբագրապետը. զիս և իմ կապիկ աշխատակիցս ծեծողները նոյնպէս դաշնակցական են. ուրեմն ամեն դաշնակցական պատասխանատու է :

— Ինչ կուզէք ըրէք, ես մատնիչ չեմ կրնար ըլլալ :

— Շատ աղէկ, պատասխանեց խմբագրապետը, դուն չես ուզեր ընել, բայց մենք պիտի բնենք. թող մատնիչ ըլլանք. ի՞նչ կայ... Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Ի Ս

Բարձրագոյն Դուռը վեց պետութեանց գեապանները հրաւիրեր է Լիբանանի նոր կառավարիչը ընտրուելու խնդիրը կարգադրելու համար :

Աւստրիական գեապանը յայտարարած է որ թուրք կառավարութիւնը երեք թիկնածուներ կայացնէ :

— Կայսերական իրատէսով մը Սելանիքի ընդհանուր կառավար-

չին կը հրամայուի Թասուս կղզին կցել Սելանիքի նահանգին և կղզիին համար կառավարիչ մը նշանակել :

— Ամսոյս 30ին մեծ պետութեանց Պոլսոյ գեապանները ժողով մը ունեցեր են. ժողովին նիւթը յայտնի չէ :

Թօփխանէի մէջ ծառայող տասներկու թուրք սպաններ էրգնկայաքստրուած են որովհետեւ իրենց թոշակները ստանալու համար ցոյց ըրեր են :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Պուլկար կառավարութիւնը կրկին նոթա մը տուեր է թուրք կառավարութեան պահանջելով որ Սէրի ոստիկանապետը պատժուի :

— Մակեդոնական գօնկրէի նիստերը սկսած են Բաղձաթի գօմիթէնիւ պատուիրակները շեն ընդունած ժողովի որովհետեւ այդ կօմիթէները իրենց յարաբերութիւնները խլած էին ներկայ Բ. կօմիթիէի հետ :

Կաշիւատին հայտուիլին կայացնել, սակայն միծ հաւանականութիւն կայ որ վերջնական բաժանում տեղի պիտի ունենայ :

— Հանքային վարչութեան մէջ մեծ խարդախութիւն մը տեղի ունեցեր է, այդ խարդախութեան շնորհիւ կառավարութիւնը ահագին ֆլուսի մը ենթարկուած է :

Թ Ո Ւ Ս Ի Ա

Չարը հրամայեր է որ Մոսկուայի «Սոլէնսքի» բանտին մէջ գտնուած ուսանողները, որոնք ձերբակալուած են վերջին խռովութիւններու պատճառով, ազատ արձակուին :

— Թարքսի նահանգապետ իշտան Օթօլէնսքիի գէմ սպանութեան փորձ կատարուեր է. իշխանը վզէն վիրաւորուեր է, իսկ քաղաքապետը ոտքէն. փորձ ընողը ձերբակալուած է :

Ա Ն Գ Լ Ի Ա

Թագադրութիւնը տեղի ունեցաւ. էտուարտ է. յօգնածութիւն չի զգար, ժողովուրդը ուրախութեան մեծ ցոյցեր ըրեր է :

— Եւրոպական թերթերը կը հազորգեն որ Անգլիա մտադրութիւն ունի Մեքան և Մէսինէն գրաւել :

— Թուրք կառավարութիւնը գիմած է Անգլիոյ առեւտրական դաշինք կապելու համար, սակայն Անգլիա պատասխանած է որ դեռ ժամանակը չէ :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա Ա

Պօէր զօրավար Լուքա Մեյէր յանկարծամահ եղեր է :

Սէյլան կղզիին գերիվար Պօէրներուն մեծ մասը չեն ուզեր Անգլիոյ հպատակութեան երգումը ընել :

Ա Ջ Դ

— «Գու թան» գիտական հանդէսի տեղւոյս յարգոյ բաժանորդը թող գիմեն նոր գործակալ Համբարձում Քիրիշեանի «Մուսալլա» և ստանան իրենց թերթերը :

Նոր բաժանորդագրուիլ փափաքողներ ինչպէս նաեւ հատով գնել ուզողներն ալ կրնան գիմել յիշեալին :

Մէկ թիւի գինն է մէկ լէվ. կարժէ որ ամեն անհատ ունենայ այս հանգէտին աճբոյլ թիւերը որոց պարունակութիւնը խիստ շահեկան է :

Յ Ա Ս Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱԲԿԷՆ ՍԻԻՆԻ» ընթերցարանի մէջ կը ծախուի Ատոմ Եարճանեանի «Իրցազնօրէն»ը ի նպատակ Հայ Ուսանողական Միութեան :

Գինն է 1 լէֆ արծաթ, կը ծախուի նաեւ «Լարիպի Ազատութեան Ծանապարհին» :
Գինն է 90 սանթիմ վառնա

»ՐԱՏՐՈՆ ՊՈՐԻՍ«

Հաճի Բանաֆօ Ա Վ Ս Ո Ն Ա Յ Յ Ի Ը Չ Ե Ս Ը

Վ Է Ս Է Լ Օ

Հայ դերասանական խմբին կողմէ Յառաջիկայ ճիկզաբքի օրշեր պիտի ներկայացուի :

Ի ն Պ Ա Ս Տ
Տ. Գալիվենսկի և երկու դերասանաց

Ա Յ Ի Տ Ա

անտի որբերգութիւն 5 արարուած հաւրաւատը հրաժշտակէ Իսաչաջի Վերսիի

Թարգմանութիւն Տ. Գալիվենսկի եղնչութիւն կասարի Հիւ եղիպտոսի մէջ քուակակէս 6300 սարի առաջ

տեսարանը զգեստ Եգիպտական ոճով նորոգ պատրաստուած :

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԲ
Պ.Գ.Յակոբեանի և Օր. Բոզալիի կողմէ
Խիստ ծիծաղաշարժ զաւելտ
Պ. Ա. Պէլեանի կողմէ

Պ Ա Լ Է Դ

Օրիորդ Բարաբոյի կողմէն Տոմսակները աշտուրէն կը ծախուին Պ. Ա. Չարպահէլեանի քով :

ԱՆՈՒՇԱԻԱՆ
ՀԱՅԻ ՀԱՍԱՐ
կամ
Ա.Ղ.ԶԿԱՆ ՄԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ
Վէպ մը իրական կեանքէ Մամոյ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ զանազան պատկերներ. հրատարակութեան նախնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան դիւրութիւն ընծայուելու համար :

Բաժնեգրին է 4 ֆրանք. բոլոր ծախքը հրատարակչին վրայ :
Տպագրութիւնը աւարտուելու գրեթէ կը յանձնուին. բաժանորդներուն Գոյանալիք հատկութեամբ ամբողջով կը նուիրուի «Հայկական Կարմիր Նաչի» ընկերութեան :
Բաժանորդագրութեան համար գիմել հետեւեալ հասցէին :
Մուրատ Երանոսեան
(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

Ա.ՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վեպաստներէն Ուրնէ աը Բօն-ժէի հեղինակութիւնը եղող, խիստ հետաքրքրաշարժ եւ բարոյալից վէպին

17րդ և 18րդ թերթերը
հրատարակուեցան :

Գիրքը շարաթը երկու թերթի հրատարակուի եւ իւրաքանչիւր թիւը կը ծախուի 5 սանթիմի : Ամբողջ գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկանայ :

Վառնայի համար բաժնեգրին 1 ֆր. Ուրնէ քաղաքներու եւ արտասահմանի համար 1.20 :

Վառնայէ դուրս, Պուլկարիոյ եւ արտասահմանի համար հինգ թերթ մէջ ծրարով կը լրկուին. փոսթի ծախքը հրատարակչին վրայ է : Դիմել հետեւեալ հասցէին՝ **Imprimerie Orientale Onnik Parseghian, Varna.**
Դրամի փոխարէն նամակադրոյ մը կ'ընդունուի :

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ. «ՇԱՐԹՈՒՄ»

Կը սպազրուին ամէն լեզու այցեստմս, հասցէտմս, նամակաղուի, հարսանեկան հրատարակիչ, մահաղբ :

Գիները յոյժ դիւրամատու են Ուրիչ քաղաքներէ Վառնայի յանձնարարութիւններ ծրարութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԼՆԻԿԻ

Отговорникъ

Мурадъ-Ераносянъ

Печатница К. Николовъ—Варна